ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 27 >> սեպտեմբերի 2018թ. N 470-Լ.

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1" Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2" Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«27» սեպտեմբերի 2018թ.
N 470-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պետական պարտքի կառավարման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Վարչության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական պարտքի կառավարումը.

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կանխիկ հոսքերի կառավարումը.

3) գանձապետական պահառու համակարգի գործունեության կազմակերպումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչությանը գործառույթներն են՝

1) կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրի նախագծի մշակումը, պետական պարտքի ցուցանիշների ծրագրավորումը.

2) կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրի իրագործումը և ներդրման դիտարկումը.

3) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորությունների ու պայմանների հետազոտումը.

4) պետական պարտատոմսերի տեղաբաշխման և հետգնման տարեկան, եռամսյակային և ամսական ծրագրերի կազմումը.

5) պետական պարտատոմսերի, ինչպես նաև ֆինանսական շուկաների այլ հատվածներում տեղի ունեցող զարգացումների դիտարկումը և համապատասխան ֆինանսական գործիքների կիրառումը.

6) առաջնային դիլերների ընտրությունը, նրանց կողմից առաջնային և երկրորդային շուկաներում ստանձնած պարտավորությունների կատարման դիտարկումը, գնահատումը և անհրաժեշտության դեպքում պատժամիջոցների կամ խրախուսման միջոցների կիրառումը.

7) գանձապետական միասնական հաշվի հոսքերի օրինաչափությունների ուսումնասիրությունը, տվյալների բազայի ստեղծումը, վերլուծությունը և կանխատեսումը.

8) պետական բյուջեի և գանձապետական միասնական հաշվի այլ ենթահաշիվների հոսքերի և մնացորդների եռամսյակային, ամսական, շաբաթական և օրական ծրագրերի կազմումը.

9) գանձապետական միասնական հաշվի միջոցների կառավարումը.

10) վարկային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի պատրաստումը, ակնկալվող վարկերի պայմանների ուսումնասիրումը, արտոնյալության աստիճանի գնահատումը և նոր վարկային պարտավորությունների ստանձնման նպատակահարմարության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

11) Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների տարածման հատուկ ստանդարտի շրջանակում Հայաստանի Հանրապետության ֆիսկալ հատվածի պարտավորությունների կատարման կոորդինացումը.

12) պետական պարտքի ծախսերի և ռիսկերի գնահատումը, ընդունելի մակարդակների սահմանումը և այդ սահմաններում դրանց կառավարումը, պետական

պարտքի և պետական բյուջեի ու մակրոտնտեսական ցուցանիշների վրա ազդող ռիսկերի սահմանումը.

13) մասնակցությունը պետական պարտքի կայունության վերլուծությանը, ինչպես նաև բյուջետային և ֆինանսական կայունության վերլուծություններին, միջնաժամկետ և երկարաժամկետ պարտքային սցենարների վերլուծության իրականացումը.

14) պետական պարտքի, հարկաբյուջետային գործառնությունների և մակրոտնտեսական ու դրամավարկային ցուցանիշների փոխազդեցության վերլուծությունը, մասնակցությունը հարկաբյուջետային և դրամավարկային կարճաժամկետ քաղաքականությունների կոորդինացմանը.

15) պարտատոմսերի տեղաբաշխման նոր եղանակների և ֆինանսական նոր գործիքների նախագծումը, պետական պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաների զարգացմանը նպատակաուղղված առաջարկությունների և ծրագրերի ներկայացումը, հայեցակարգերի և ուղեցույցերի մշակումը.

16) բյուջետային հարցերի հանձնաժողովի նիստերի կազմակերպումը.

17) միջազգային վարկանիշային ընկերությունների հետ համագործակցությունը.

18) պետական և մասնավոր մարմինների, ներդրողների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, ինչպես նաև ներքին և արտաքին վարկատուների հետ վարկերի ստացման և պարտատոմսերի թողարկման վերաբերյալ բանակցությունների վարումը.

19) Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի գծով գործարքների գրանցումը և հաշվառումը, գրանցումների պարբերական դիտարկումը և տվյալների ճշտության ստուգումը.

20) Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքային պարտավորությունների գծով ապագա վճարումների ծրագրավորումը և ժամանակացույցերի կազմումը.

21) Հայաստանի Հանրապետության կառավարության վարկային համաձայնագրերի շրջանակներում վարկային միջոցների մասհանման գործընթացի կազմակերպումը.

22) Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի մարման և սպասարկման գործընթացի կազմակերպումը.

23) միջազգային ֆինանսական կազմակերպություններին անդամակցության գծով վճարումների կանխատեսումը, իրականացումը և հաշվառումը.

24) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում դրված ավանդների և դրանցից ստացվող տոկոսային եկամուտների հաշվառումը.

25) Հայաստանի Հանրապետության նկատմամբ ոչ ռեզիդենտների պարտքային պարտավորությունների հաշվառումը, վճարումների կանխատեսումը և հաշվառումը.

26) Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ հաշվետվությունների և տեղեկանքների պատրաստումը.

27) պետական պարտատոմսերի մանրածախ վաճառքի կազմակերպումը և ներդրողների սպասարկումը.

28) թողարկումների ծրագրերը ճշգրտելու նպատակով գանձապետական պահառուի ներդրողների կազմի ու կառուցվածքի մշտական դիտարկումը, դրանց փոփոխությունների դինամիկայի բացահայտումը.

29) տեղեկատվության ազատության ապահովումը.

30) Նախարարության կանոնադրությամբ հաստատված գործառույթների իրականացումը.

31) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը, նրա բացակայության դեպքում՝ բաժինների պետերից մեկը՝ Վարչության պետի հանձնարարությամբ:

7. Վարչության պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Վարչության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

9. Վարչության պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

10. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Վարչության պետը:

11. Վարչության բաժինների աշխատանքը ղեկավարում և կազմակերպում են բաժինների պետերը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները՝

1) Գանձապետական պահառուի աշխատանքների կազմակերպման բաժին.

2) Գործառնական բաժին.

3) Հաշվառման և սպասարկման բաժին.

4) Ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժին:

13. Վարչության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):